ՏՂԱՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

Ե՞ՐԲ Է ՍԿՍՎՈՒՄ ՏՂԱՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

- Տղաների սեռական հասունացումն սկսվում է միջինում 11.5 տարեկանում, նորմալ սահմաններն են 9-ից մինչև 13 տարեկանը:
- Սեռական հասունացման ժամկետների վրա ազդում են մի քանի գործոններ, որոնցից են ժառանգականությունը, ընդհանուր առողջական վիճակը, ավելորդ կամ անբավարար քաշը և այլն:

Ի՞ՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԿԱՏՎՈՒՄ ՏՂԱՆԵՐԻ ՄՈՏ

- Հասունացման վաղ նշաններից է ամորձիների չափերի մեծացումը, որին հաջորդում է առնանդամի աճը և սեռական օրգանների շրջանի մազակալումը:
- Աճի թռիչքը տեղի է ունենում սեռական օրգանների աճից մոտ 1 տարի անց, մոտավորապես 15 տարեկանում:
- Աճի թռիչքից կարճ ժամանակ անց սկսվում է գիշերային սերմնաժայթքումը:

Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Դեռահասի մոտ կարող են դիտվել հետևյալ խնդիրները՝

- կորյակներ (ակնե),
- սկոլիոզ,
- կրծքագեղձերի մեծացում (գինեկոմաստիա) տղաների մոտ,
- կարճատեսություն,
- հոգեբանական և էմոցիոնալ փոփոխություններ, դեպրեսիաներ,
- ռիսկային վարքագիծ:

Ե՞ՐԲ ԱՆՀԱՆԳՍՏԱՆԱԼ ԵՎ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

- Եթե մինչև 9 տարեկանը նկատվում է ամորձիների մեծացում:
- Եթե 14 տարեկանում դեռ չի նկատվում ամորձիների և առնանդամի մեծացում:
- Եթե 15 տարեկանում դեռ չկա սեռական օրգանների շրջանի մազակալում:

Ի՞ՆՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

- Մանկաբույժի ամենամյա զննումներ՝ զարգացման գնահատման և խնդիրների վաղ հայտնաբերման նպատակով:
- Ակնաբուժական քննություն՝ տեսողության խնդիրների վաղ հայտնաբերման նպատակով:
- Փայտացման, դիֆթերիայի և կապույտ հազի դեմ կրկնապատվաստում:
- Մարդու պապիլոմավիրուսի դեմ պատվաստումներ՝ քաղցկեղի 6 տեսակների կանխարգելման համար, որոնցից 4 տեսակները (բերանի խոռոչի և կոկորդի, առնանդամի, հետանցքի) հանդիպում են տղամարդկանց մոտ:
- Մենինգակոկային պատվաստում:
- Այլ պատվաստումներ, որոնք ըստ ՀՀ Ազգային օրացույցի կատարվում են նախազորակոչային և զորակոչային տարիքում:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

WIGMORE